12. ԽՈԽ

Բազրկան մը կէջնի։ Կէջնի զուր ձիանք կառնի կէրթա բազրկնութենն։ Կէրթա, գեղի վերև գերեզմնի մոտ խոխ մը կտեսնա հ՚ոգի, կվերու ուր ճակատագիր կկարդա, կտեսնա, որ վրեն գրված ա. «Հընչի քառսուն մարդ չսպանիմ, չմեռնիմ»։ Բազրկան կվերու ըդ խոխ, կառնի ուր հետ, կէրթա։ Բազրկնութենեն որ կդառնա, կիգա, ըդ խոխ կրերա կդրա աչկունք։

Բազրկան էմլա կէջնի, կէրթա բազրկնութեն։ Կնիկ լուսուն կէջնի փոշին որ թոնդիրից կհանա, կտեսնա ըդ խոխ գրուկ ա աչկունք։

Կասի.—Ըդա խոխ հ՚ուր էղնի՝ ըդի կնկա խոխ ա։ Բազրկան ծռի վերեն, բերեր ա։

Կվերու խոխ կթալա թունդիր։ Լուսուն որ էմլա փոշին կհանա, կտեսնա որ պզտիկ հըլու մը թունդրեն էլավ։ Հըլուն կիտա ախչիկ, կասա.—Բռնա քու մոտ, հընչի ես փոշի թափիմ իդամ։

Հըլուն ընխադար խորոտիկ կէղնի որ ախչիկ չխիմիչի առնի ձեռ՝ դրա բերան։ Հըլուն բերնի մեջ կհալի։ Կմնա ամիս մ՚էրկուս, ախչիկ կէրկուհոգովնա, մամ դինա, թե աղջիկ սիրողութին է էնի։ Ձախչիկ կթալին հ՚օդի մը մեջ, անոթի-ծարավ, հ՚օրեն մեկ կտոր հաց կիտան։

Բազրկան որ բազրկնութենեն կիգա, կիշքա որ ուրանց տնեն մարդ չի գա ուր առեջ։

Կասա.—Հ՚ուր էղնի, մըր տուն մարդ ա մեռե։

Բազրկան կիգա տուն, կիշքա, օր հ'ըմեն սաղ ին, կհարցու, կասի.

— Իմ ախչիկ հ'ո՞ւր ա։

Կնիկ կասա.—Քու ախչիկ հանդ է շայնում, քու ախչիկ սիրողութեն էնի խըլղի հետ, էրկու հոգովցեր է, հանդ է պատուկ էնա տեղ։

Բազրկան կէրթա հ'օդի դռան, կասա.—Ախչի՛, ախչի՛, դուռ բաց։

Հըլուն օր ախչիկ կլուցեր ա, կընկնի ուր միտք։

Կասա.—Բազրկա՛ն, կա՛նի, էրկու խոսք կզրուցիմ քու հետ ու նոր զգուռ կբանամ։

Կասա.—Ըն օթկուն օր դու բազրկնութենեն էկար, ըն խոխ օր բերեցիր, իմ մամ թալեց թունդիր, փոշին օր հանեց, պզտիկ հլու մը էլավ փոշու հետ. հըլուն տվեց հ'իս, ըսեց՝ պահե։ Հըլուն ես դրեցի իմ բերան, հըլուն իմ բերնի մեշ հալավ, հ'ուր էղնի էդ հըլնեն ա իմ փոր ուռե։

Բազրկան դինա, օր հըլնի շառն ա, կվերու զախչիկ կբերա տուն, կպառկցու դոշկներու մեշ, ին ամիս օր կթըմի, կէղնի տղե մը ախչկան։

Տղի հերկնութեն թիզ մը կէղնի, մորուք էրկու թիզ, բազրկան շուկեն կէղնի։ Հ'իրիկուն օր բազրկան կիգա, տղեն կասա.—Աբո՛, բարով էկար։

Բազրկան կըսա.—Բարու մեշ մնաս։

Լուսուն բազրկան էմլա կէրթա շուկեն։ Կտեսնա օր տալալ կբոռա, կըսա.—Գողեր մտած թագավորի խզինեն, թամամ ի տարած։ Թագավոր հ'ուխտ էներ ա, օր ըն գող ինչ դախ հ'իգա իմ մոտ, իմ ախչիկ կիտամ ուրին։

Հ'իրիկուն օր բազրկան կիգա տուն, ըդ պզտիկ տղեն էմլա կըսա.—Բարով էկար,—կըսա,—աբո՛, իսկի շուկեն ի՞նչ կեր, ի՞նչ չկեր։

Կասա.—Լա՛ո, վոլա սաղութեն, բան չկեր։

Կասա.—Աբո՛, ընչի՞ սուտ կէնիս, չէ դալալ կրոռեր թա՝ գոզեր մտած ա թագավորի խզինեն, ինչ դախ էն գող իգա, իմ ախչիկ կիտամ ուրին։

Բազրկան կասա,—Չէ՛, լաո, իսկի էմալ բամա՛ չըն ասի շուկեն։

Տղեն կասա բաղրկնին.—Լուսուն օր գացիր, ինչ դախ օր դալալ բոռաց՝ ըսա. «Պզտիկ տղե մի կա մըր տուն, առեք զէնի տարեք, էնի դինա զձեր գող»։

Բազրկան լուսուն կէրթա շուկեն, դալալ էմլա կբոռա, բազրկան չիշխնա ըսա, կըսա՝ «Վախենամ ասիմ՝ տղեն տանին, չգինա՝ տանին զիս սպանին»։

Հ՝իրիկուն բազրկան էմլա կիգա տուն։ Պզտիկ տղեն էմլա կըսա.—Աբո՛, բարով էկար,—կասա,—ի՞նչ կա շուկեն։

Բազրկան կասա.—Լաո՛, բան չկա, հեն օր խալի էր շուկեն։

Կասա.—Աբո՛, դու հ՝որի՞ սուտ կէնիս։ Չէ՞ էմլա դալալ կրոռեր, թե թագավորի գող հ՝ո՞ւր ա, թ՝իգա իմ ախչիկ կիտամ ուրին։ Լուսուն օր գացիր մայեամ ասիս, թե. «Պզտիկ տղե մը կա մըր տուն, արեք տարեք, ընի դինա ձըր գող»։

Լուսուն օր բազրկան գնաց, դալալ էմլա բոռաց, բազրկան ըսեց դալալին.—Պզտիկ տղա մը կա մըր տուն, արեք զէնի տարեք, ընի դինա ձըր գող։

Դալալ կէրթա թագավորին կասա, թը՝ բազրկնի տուն պըզտիկ տղե մը կա, ընի դինա զմըր գող։

Թագավոր մարդ ճամբցուց, զտղեն դրեցին բամբկի մեշ, մոմեր վառեցին կշտներ, առան էկան թագավորի մոտ։

Թագավոր ըսեց.—Իգա՞ ի իմ գող դինա։

Թագավոր զարմացավ, հարցուց տղից, ըսեց.—Քու գող քու զաբո՛ւթն ա, օնբաշի՛ն ա, քո խազի՛ն ա։

Դե ըդ տեսակով հընչի քառասուն մարդու անուն կիտա, կասա.—Թը չըս ավտնա, քելե էրթանք քո ախչկա հ՝օդեն։

Կէրթան ախչկան հ՝օդեն, կասա.—Իշկե՛ք ախչկա տեղի տակ։

Ախչկա տեղ օր կվերուն, կտեսնան օր ծակ մը կա հ՝ոդի, կմտնին ծակու մեջ, կտեսնան օր լըղմ թալուկ՝ գացի խազու տուն։

Թագավոր զքառասուն մարդ կքոմա, կբերա, տղեն կէղնի բալթաշի մը, զքառասուն մարդ լա ուր ձեռնով կսպանա, զախչիկ լա կսպանա, տղեն կհամբարձի։